

լսեմք եւ ոչ իմանամք, իմանամք եւ ոչ կատարեմք պատճառելով զպատճառս, որ կորստականք են եւ արկածք բանսարկուին, որք տնկին ի սիրտս մեր նոյն պատճառք որպէս զփուշս եւ հեղձուցանեն զբարին սերմանեալ: Քանզի լուաք յոմանց, որք ընդդիմանան թէ նա Որդի Աստուծոյ էր եւ խոնարհեցաւ եւ համբերեաց՝ այլովք: Պատասխանեմք թէ Ո՛վ անմտութեանդ, զի նա թէ Աստուած էր եւ արար զխոնարհութիւն մերով բնութեամբս, վասն որոյ շնորհեաց Աստուած նմա անուռն ի վեր քան զամենայն ընտրեալ եւ սիրելի եւ հաճոյ վկայելով [ի] Յորդանան եւ ի Թաբոր¹⁾: Եւ այնպէս կամեցաւ զընտրեալս իւր իւրով ճանապարհովք ընթանալ յայն հանգիստն. Ուսարուք, ասէ, զի ես հեզ եմ եւ խոնարհ սրտիւ, եւ հանգչին սիրաք ձեր ամենայնի. Որ ոք կամիցի զհետ իմ գալ, խաչիւս եկեսցէ, զի Աստուած այնպէս ճշմարիտ երկըրպագուս իւր խնդրէ: Որպէս Պօղոս ասէր. Չունիմք որպէս թէ զամենայն ինչ ունիմք, եւ ընդարձակի սիրաք որպէս զծով եւ զուարթացեալ լայնանայ որպէս զերկին: Տե՛ս զՋուր, հեղանիլն ի ցած գնայ, որքան գնայ՝ զխոնարհ տեղին ստանալ ձեպէ եւ անդադար հօլովի ի խոնարհ որքան կարն իցէ, զոր տեսանեմք ի բարձանց անկեալ ընդ խորս, որպէս ռամիկն ասէ. Կէրչի սու կիպի ալչաղըզ, իւքսէկտէ տըր նազարըմըզ: Որպէս Տէրն մեր մարդ երեւեալ եւ զԱստուծոյն գործէր զգործ. եւ պատուիրէ Պօղոս Մի՛ զերկրայնոցս խորհիլ այլ զվերինն, ուր Քրիստոս նստի, որպէս եւ ինքն՝ Սատանայ ասելով Պետրոսի յանդիմանէր՝ Ոչ խորհիս դու զաստուծոյսն այլ զմարդկան: Ո՛վ երանելեաց դասուց, զորոց զտօնս հանդիսիւ կատարեմք եւ բարեխօս կալնումք առ Աստուած, տե՛ս զի ոչ ի-

1) Թափօր.

- յամայնն (

- նա (